ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/4» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

18.07.2019թ.
ժամը 11^{00}

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ տեխնիկական ապահովման վարչության պետ, գնդապետ Հ. Կարապետյան (ԳԱՊ),
ՀՀ ՋՈՒ ՍՎ ԱԾ հաշվառման բաժնի պետ, գնդապետ Ս. Պետրոսյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ տեխնիկական ապահովման վարչության ինժեներական, քիմիական և հետախուզական միջոցներով ապահովման բաժնի առաջատար մասնագետ Ա. Սիմոնյան,
ՀՀ ՋՈՒ ՍՎ ԱԾ շահագործման և պլանավորման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Դ. Սերոբյան:

Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ Ա. Ամիրյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/4» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Ամիրյան)

1. Մասնակիցների՝ բաց մրցույթի ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության, առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ բաց մրցույթի ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության, առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

(Ա. Ամիրյան)

1.1 «ՍՎԱ մոթորս» ՍՊԸ-ի և «ՅՈՒՆԻՔ ԼԱՅՆ» ՍՊԸ-ի՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/4» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, հայտով առաջարկված ապրանքների ամբողջական նկարագրերը առկա են և գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են հրավերի պահանջներին համապատասխանող:

Սարուխան Մուշեղի Բրուտյան Ա/Ձ-ն ներկայացրել է գրություն (կցվում է)՝ համաձայն որի 11-րդ և 17-րդ չափաբաժիններով թյուրիմացաբար առաջարկվել է միավորի գներ, այդ իսկ պատճառով Սարուխան Մուշեղի Բրուտյան Ա/Ձ-ն հրաժարվում է նշված չափաբաժիններից: Հաշվի առնելով վերոգրյալը՝ գնահատող հանձնաժողովը 19.07.2019թ. որոշեց մերժել վերջինիս հայտը:

«ԳԴԱԿ» ՍՊԸ-ի՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/4» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, հայտով առաջարկված ապրանքների ամբողջական նկարագրերը առկա են: «ԳԴԱԿ» ՍՊԸ-ի՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/4» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին իր

համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը՝ 1-ին, 3-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ չափաբաժինների մասով և հայտով առաջարկված ապրանքների ամբողջական նկարագիրը 6-րդ, 8-րդ և 10-րդ չափաբաժինների մասով գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են հրավերի պահանջներին համապատասխանող, իսկ 1-ին, 3-րդ, 7-րդ և 9-րդ չափաբաժիններում ընդգրկված ապրանքների ամբողջական նկարագրերում գնահատող հանձնաժողովը արձանագրել է անհամապատասխանություններ՝ մասնավորապես, նշված չափաբաժիններում «ԳԴԱԿ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված 6.1-ում բացակայում են առաջարկվող ապրանքների կատալոգային կոդերը, ինչի արդյունքում գնահատող հանձնաժողովը հնարավորություն չունի գնահատելու մասնակցի կողմից առաջարկված ապրանքների ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

«Ժակ և Գոռ» ՍՊԸ-ի՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/4» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, հայտով առաջարկված ապրանքների ամբողջական նկարագրերը առկա են: «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ի՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/4» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը՝ 4-րդ, 12-րդ և 15-րդ չափաբաժինների մասով և հայտով առաջարկված ապրանքների ամբողջական նկարագիրը 15-րդ չափաբաժնի մասով գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է հրավերի պահանջներին համապատասխանող, իսկ 4-րդ և 12-րդ չափաբաժիններում ընդգրկված ապրանքների ամբողջական նկարագրերում գնահատող հանձնաժողովը արձանագրել է անհամապատասխանություններ՝ մասնավորապես, 4-րդ չափաբաժնի մասով «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/4» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվել էր, **գունավոր մետաղից ոչ պլումինե կամաձ 3-սեկցիաներով (медный) գործարանային փաթեթավորմամբ, մակնիշավորումը գործարանային,** իսկ 12-րդ չափաբաժնի մասով՝ **4 սեկցիաներով, գունավոր մետաղից ոչ պլումինե (медный) Մակնիշավորումը գործարանային, Գործարանային փաթեթավորմամբ**: Եվ 4-րդ և 12-րդ չափաբաժինների մասով «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված 6.1-ում բացակայում է **медный** արտահայտությունը, ինչը պարտադիր պայման է:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն, մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունեն օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություններ:

Հաշվի առնելով «ԳԴԱԿ» ՍՊԸ-ի և «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ի մոտ առկա անհամապատասխանությունները՝ գնահատող հանձնաժողովը 19.07.2019թ. որոշեց առաջարկել մասնակիցներին՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել տեղ գտած անհամապատասխանությունները:

Սարուխան Մուշեղի Բրուտյան Ա/Ձ-ի հայտը 11-րդ և 17-րդ չափաբաժինների մասով մերժելու արդյունքում՝ ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ գնահատող հանձնաժողովը 19.07.2019թ-ին 11-րդ և 17-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչեց «ԱԲԻ» ՍՊԸ-ին:

1.2 Հանձնաժողովը որոշեց «ԱԲԻ» ՍՊԸ-ին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/4» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը և առաջարկված ապրանքների ամբողջական նկարագրերը:

1.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի ***«Ֆինանսական միջոցներ»*** որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Ամիրյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/4» ծածկագրով ընթացակարգի նիստ հրավիրել՝ պահանջված շտկումների մասով՝ անհամապատասխանությունների շտկման համար նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը, ժամը 11^{00}-ին, իսկ 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացվելիք փաստաթղթերի մասով՝ ոչ ուշ քան հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը, ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)	Հ. Կարապետյան
Գնահատող	Ս. Պետրոսյան
Գնահատող	Ա. Սիմոնյան
Գնահատող	Դ. Սերոբյան
Գնումները համակարգող՝	Ա. Ամիրյան

Հայտնում ենք Ձեզ, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ–ԲՄԱՊՁԲ–4/4» ծածկագրով մրցույթի 11-րդ և 17-րդ չափաբաժիններով մեր կողմից առաջարկվել է թյուրիմացաբար միավորի գինը: Այդ իսկ պատճառով Ա/Ձ Սարուխան Մուշեղի Բրուտյանը հրաժարվում է նշված չափաբաժիններից:

Ա/Ձ Սարուխան Մուշեղի Բրուտյան 09.07.2019թ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/4» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

23.07.2019թ.
ժամը 11^{00}

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՁՈՒ ՍՎ ԱԾ հաշվառման բաժնի պետ, գնդապետ Ս. Պետրոսյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ տեխնիկական ապահովման վարչության ինժեներական, քիմիական և հետախուզական միջոցներով ապահովման բաժնի առաջատար մասնագետ Ա. Սիմոնյան,
ՀՀ ՁՈՒ ՍՎ ԱԾ շահագործման և պլանավորման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Դ. Սերոբյան:

Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ Ա. Ամիրյան:

Բացակայում է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ տեխնիկական ապահովման վարչության պետ, գնդապետ Հ. Կարապետյանը (ԳԱՊ):

Քանի որ հանձնաժողովի նախագահ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ տեխնիկական ապահովման վարչության պետ, գնդապետ Հ. Կարապետյանը բացակայում է նիստից, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 26-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները՝ նիստը նախագահում է ըստ հանձնաժողովի կազմում ընդգրկման առաջնահերթության նախագահի թեկնածուից հետո նշված՝ ՀՀ ՁՈՒ ՍՎ ԱԾ հաշվառման բաժնի պետ, գնդապետ Ս. Պետրոսյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/4» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Ամիրյան)

1. Մասնակիցների կողմից ներկայացված շտկումները քննարկելու մասին.
2. Մասնակցի՝ բաց մրցույթի ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության, առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Մասնակիցների կողմից ներկայացված շտկումները քննարկելու մասին.

(Ա. Ամիրյան)

1.1 «ԳԴԱԿ» ՍՊԸ-ն և «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել են գնահատող հանձնաժողովի կողմից 19.07.2019թ. պահանջված շտկումները, որոնք գնահատող հանձնաժողովի կողմից գնահատավել են հրավերի պահանջներին համապատասխանող:

2. Մասնակցի՝ բաց մրցույթի ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության, առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

2.1 25.07.2019թ. գնահատելով 11-րդ և 17-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած «ԱԲԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը՝ արձանագրեց, որ վերջինս ներկայացրել է, իր կողմից առաջարկված ապրանքների ամբողջական նկարագրերը, որոնք համապատասխանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/4» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին: Սակայն, մասնակցի կողմից չի ներկայացվել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/4» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթերը: Մասնավորապես, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/4» ծածկագրով ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2.5 կետի 1-ին ենթակետի համաձայն՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում ավտոպահեստամասերի մատակարարման պայմանագրերը:

բ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

գ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները.

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/4» ծածկագրով ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ 3-րդ կետի համաձայն՝ սույն հրավերով նախատեսված՝

1) որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովի քարտուղարի՝ սույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով, հանձնաժողովին է ներկայացնում սույն հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում են՝

ա. իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 6.1-ի.

բ. հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն, «ԱԲԻ» ՍՊԸ-ն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ:

Հաշվի առնելով, որ «ԱԲԻ» ՍՊԸ-ն չի ներկայացրել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/4» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթերը՝ գնահատող հանձնաժողովը 25.07.2019թ. որոշեց նիստը կասեցնել և առաջարկել մասնակցին՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել տեղ գտած անհամապատասխանությունը:

«ԱԲԻ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է պահանջված շտկումները («Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթերը), որոնք գնահատող հանձնաժողովի կողմից գնահատավել են հրավերի պահանջներին համապատասխանող:

2.2 Որակավորման փաստաթղթերի գնահատման նիստի ավարտի օրը՝ 26.07.2019թ., հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց «ԳԴԱԿ» ՍՊԸ-ի (1-ին, 3-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ չափաբաժիններ), «ՍՎԱ մոթորս» ՍՊԸ-ի (2-րդ և 5-րդ չափաբաժիններ), «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ի (4-րդ, 12-րդ և 15-րդ չափաբաժիններ), «ՅՈՒՆԻՔ ԼԱՅՆ» ՍՊԸ-ի (կոնսորցիումով «Տեր-Գրիգորյան Սամվել» ԱՁ-ի հետ) (13-րդ և 14-րդ չափաբաժիններ), «ԱԲԻ» ՍՊԸ-ի (11-րդ և 17-րդ չափաբաժիններ) որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/4» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի հրավերի պահանջներին, վերջիններիս հայտարարել ընտրված մասնակիցներ և անգործության ժամկետի ավարտից հետո վերջիններիս պայմանագրեր կնքելու առաջարկ ներկայացնել:

2.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/4» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Ամիրյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/4» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրեր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող	Ս. Պետրոսյան
Գնահատող	Ա. Սիմոնյան
Գնահատող	Դ. Սերոբյան
Գնումները համակարգող՝	Ա. Ամիրյան